


ՏՆՕՐԷՆ-ԽՍՐԱԳԻՐ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՆՓՈՒՐ

Նամակ կամ որ եւ է գրութիւն
պէտք է ուղղել առ

ԽՍՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ ԽՊԱԳՐԷ
Պազար Մուրուր, ԳԱԶԻՐԷ

Direction du journal PAROS
Bazar Mourour, CAIRE Egypte



Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՆԱԲԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔԵԱՐԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱՅԻՆՈՒԹԻՒՆ

Եզրագրութիւն Եւ Մարտի 80
» » Բեկաւանայ » 50
04 ար երկիրներ ստեղծեց Գրան 25
» » Բեկաւանայ » 14
Թարգմանիչ Ժողովրդական
Եւ Մարտի 80

Խմբագրութեան ուղղութեամբ
մակ կամ այլ գրութիւն եւ չի տրուիր

ԲԱՆԱԲԱԿԱՆՔԻՆ

ԱՐԱԿԱՆԸ

«Բանբասանք»ը յատկանշական բառ մըն է որ ատեն մը մեր մէջ կը գործածուէր զեղեցիկ սեռին տգեղ մէկ ունակութիւնը ցոյց տալու համար միայն. քաղաքակրթութեան ծաւալումը ու բարձրումը աշխատանքը բերին այն վիճակին հասնելուն զմեզ, որ հիմա՛կ զօրաւոր սեռին զօրաւորացումը մէկ ունակութիւնը դարձած է: Մենաշնորհ մը զոր պարզապէս կրնանք ձեռք բերել խելոյն երկիւմարիկ: Ու շիտակէն լսելու համար, ամեն արժանիք ունէինք այս յատկանշական տղաքանքները համար: Կրնորք չեն կրնար պէտք եղածին պէս գործածել զայն. քայլ մը առաջ չեն երթար, միեւնոյն չընտանակին մէջ գտնուելով շարունակ: Գրայի օրինակին նշանաւորը, բարեկամահի մը սիրային մէկ արկածը և կամ փողոցն անցնող կնոջ մը արգելադրող զոր կը քննադատէին, մի և նոյն ատեն հետաքրքրուելով զայն կրողին ո՛վ ըլլալը գիտնալու: Նորհապաղելուն դէմ հաղածանք, տղաներուն նկատմամբ մեղադրանք. ահա՛ բոլորը:

Բանբասանքի ընկերային մենաշնորհը է՝ ըրկմարդերուն փոխանցուելն ի վեր, — լուսկանը որոշ չենք յիշեր, — անհուն պէսպիսութիւն մը ստացաւ ու սահմանադիմն ընդարձակուեցաւ: Այլ ըսէ՛, որչափ որ կրնաւ ու ինչպէս որ կուզէր, տալարեզը բաց է առջիւ. և եթէ լեզուը կը յոգնի, կամ կը վախճաւ որ ձայնը պէտք եղածին չափ արձագանգ չի գտներ, գրիչը օգնութեան կանչէ. փոյթ չէ թէ փետուրը շատ կեղտոտ ըլլայ կամ մեղանը խառնակ. քուկը ըլլայ կամ ուրիշներ. գրածը մը, երբեմն, սա առաւելութիւնը ունի որ իր հեղինակը կրնայ մութի մէջ պահել, մինչդեռ խօսող մը՝ ճակատաբաց պէտք է կենայ: Աս վերջի պարագան ալ սակայն իր «բարեփոխումը» կրնայ հետագահեալ. մութի մէջ խօսող ու գաղտնագողի բանբասանքը լեզուն կը կազմեն: Հարկւրին մէկ եթէ իրենց հաւատարմ գտնեն՝ կը բռնէ յագուրդ տալու իրենց ստոր կրքերուն:

Կին մը, որչա՛փ նենգամիտ, որչա՛փ ապականուած ըլլայ, իր բարեկամահիին մէկ բանբասանքը, մէկ զրպարտութիւնը մոտիկ ըրած ատեն՝ չի պիտի զգար բնաւ այն կուշտ

ու կուշտ հաճոյքը զոր երկմարդը կանենայ՝ անհուն վայելքի մը պէս. փոյթ չէ թէ բանբասանքը, զրպարտութեան այն անձերէն մէկն եղած ըլլայ որուն ձեռքը կը սեղմէր զեռառջի օրը և որուն թեւը պիտի մոտէ յաշարը իրիկունը. հաճոյքը՝ հաճոյք ըլլալէ չի դադարիր:

Ինչքան կրնանք, որոնք չի գիտցան իրենց այդ մօտօրոյն յագուրդ. ինչպէ՛ս կը նախանձին արդեօք տեսնելով որ այլերը հազար ու մէկ ձեռք տակ անկից օգտուել գիտցան. ճիշդապէս մենք անգիտէինք, գաղտնագողութիւններու բաժնեցին, կատարեալ տէրը եղան ահա: Իրենք՝ իրենց վարդապետ չրթունքները միայն ունէին իրրեւ զէնք նախանձանքի դէմ, սարսնին անկիւնը, մտեղմ գումարման մը մէջ որ կերթար կը ծաւալէր ըստածնելուն ու ըստածնելը՝ ընտանեկան ուրիշ յընձնակներու մէջ. կը բռնէր այդքանը: Իրենց մերցակցները, զօրաւոր սեռը, այդ նորոգաց շահագործման ծառայեցուցին ո՛չ միայն իրենց բնական բոլոր յատկութիւնները, այլ և աշխատանքի գիտելու լիցքաւոր, սոստորութիւն, բոլորեալ, ամեն բան:

Եւ ասոնք իրենց արժանի բաներները, colporteurները ունեցան, որոնք կը պարտին ամեն կողմ ու զնդամուղի խողէ մը վերջ, նուազածութեան մը գաղաթի միջոցին և կամ երկու գաղաթի մէջտեղ, իր թէ օրուան հեռաւորը յիշելու պէս, կրնան քեզի անփոյթ ձեռք մը «կարգադրութիւն» Եւ եթէ բառական աշխատանք ես ու կեանքի մէջ փորձ՝ պատասխանելու համար թէ «կարգադրութիւն» չես տար, գաղտնագողութեան ատարձանք տկարացած պիտի հուշակեն կամ պիտի փորձեն համոզել, բացատրել, մեկնել քեզի՝ կէտը կէտին, անտեսել, տեղով, — նոյն իսկ եթէ իրենք հաւատարմութեամբ, — իրեն հարազատ commis-voyageurներ խորհարարած ու կեղծ ապրանքի մը:

Այն միջոցին ուր աշխատութիւն, ուղղաւորութիւն, զհողութիւն ու ամեն պէս խոշոր բառեր ժողովրդային յանկերգի մը պէս կը գործածենք ամենքս անխորհրդ, գէշ չէր ըլլար պահ մը մտածել թէ այդ զգալուններէն որոնք կը համապատասխանէ՞ կրնանք իրենց անխորհրդ անհակութիւնը զոր իր ամենէն չարամիտ ձեռքն հասցունելու կատարող միջոց մը մղտնեւոր գաղտնագող մը կայ մեր մէջ: Բարի ձեռքերու, օրինակելի յատկութիւններու

ընդհանրացումը քաղաքացիական, մեր միջոցաւորութիւնները մոտաւոր և անոնց անտես իսկ չարատեսներու ատարձան մարտերուն չըլլանք. ժողովուրդի մը ընկերային մակարդակը հարկելու, աշխատանքներու համարձակ հարաբերակցութեան հանել անոր որոնք ու ցերեւ և զո՞ւ ստորադրող անհակութիւնները: Ինչ մը անհեղձութիւն ու համարձակութիւն կը բաւեն այս բանին համար:

ԱՅԺՄԷՆՈՒԹԻՒՆ

Հիւզարքի օրը Ս. Թարգմանչաց սօնէ եր: Ասեմ մը սովորութիւն կար Պոլիս, որ ամեն արիւնջի աշիւ արտադրանք, եկեղեցական-դպրոցական հանդէսներ կը կազմակերպուէին ի յիշատակ Սահակ-Մեարոսաց, աղօթքներով, ճաշերով, երգերով: Մասաղ սերունդին համար հրահանգիչ ու ոգեւորիչ բան մը կար այդ սօնականութեան մէջ: Ազգային-կրօնական հանդէսներուն հետզհետէ սեղանադրելու ու արգիլուելու ի վեր, շատ քիչ կար մէկ հետք մնացած է այդ ատկական սովորութիւններուն. բայց անոր տեղ եզմիւրեանց մեղանակաւորութիւնը կայ, որ գրական մեղմ մը մեկնելու սակ կը կատարէ Թարգմանչաց սօնը ու իրական քաջաբերան մը կրնայ զոչիփասաւարդներուն:

Այստեղ, ուր ո՛չ եզմիւրեանց մեղանակ ունի մը ո՛չ ալ ազգային-եկեղեցական հանդէսներու սօնական դէմ ո՛ր եւ է արգելք, պէտք չէ՞ որ եկեղեցին ու ազգ. վարժարանը միահաղոյն սօնէին հայ աստուծոյ գիտնալը սրտմակաւ յիշատակը: Օտարութեան ու պակասութեան մէջ, հայ զաւորները գործարաններ փարեղու են այս սեռակ սօնէրուն. աղօթք մը արեւի կամ երգ մը պակաս շնորհուն մեջ չէ անհաշտ անոնց նշանակութիւնը, այլ այն ոգեւորութեան, եղբայրակցութեան ու պահպանման մէջ գործի պիտի զգային ամենքս՝ սահման անցնելով դպրոցական յարկի սակ, եկեղեցականներու առաջնորդութեամբ ու հարիւրաւոր զաւակներ շրջապատած որոնք կանխիկ օրինակը պիտի առնէին աւանդապատկարներուն:

ԹՈՒՐԹԻԱ ԵՒ ՅՈՒՆԱՍՏԱՆ

Առասիկ չորեքշաբթիէն ի վեր յաջորդաբար հասած հեռագիրները .

Լոնտոն, 14 յուլիս. — «Թայմզ» կիմանայ թէ անգլիացի տասնըվեց զինուորներ ըստ պաննուեր են ի Գանտիա, պաշտպանութեան հետ կուտի մը մէջ : Երեք հարիւր անգլիացի նաւաստիներ ցամաք ելան և ծովակալները հինգ մարտանաւ խրկեցին՝ թուրքերու շարժումները արգելելու համար :

Կ. Պոլիս, 14 յուլիս. — Դեսպանները վաղը պիտի գումարուին, Պ. Գանպօնի փրանսա մեկնելէն առաջ :

«Ժէօն-Թիւրքի» կուսակցութեան շատ մը անձեր ձերբակալուեցան :

Չարը բարեկամական ոճով հեռագիր մը ուղղեց Սուլթանին, թեալիս անմիջապէս պարպելու պէտքին վրայ պնդելով : Սուլթանը հաստատական կերպով պատասխանեց, յարելով սակայն թէ այս տեսակ որոշման մը պատասխանատուութիւնը չի ստանձնիր :

Բարիդ, 15 յուլիս. — Պ. Գանպօն երէկ ընդունելով Կ. Պոլսոյ ֆրանսական գաղթականութիւնը, իր բանախօսութեան մէջ մտաւոր հաշտութեան մը յոյսը տուաւ :

Լոնտոն, 15 յուլիս. — Երեսի. Ժողովոյ մէջ Պ. Բըրդըն ըսաւ թէ բոլոր Տէրութիւնը հակառակ են թուրքիոյ առաջարկին որով կուզէ Կրետէի զինուորական զօրութիւնն աւելցունել :

— «Թայմզ»-ին Աթէնքէ ստացած տեղեկութիւնը՝ Գանտիայի մէջ պաշտպանութեան և անգլիացի զինուորաց միլիւ կուուոյ մը մասին, անհիմն է :

Կ. Պոլիս, 16 յուլիս. — Թէվֆիդ փաշա իմացուց դեսպաններուն թէ պատրաստ է բանակցութիւնները վերսկսիլ վաղը (այսօր՝ շաբաթ) :

Նախկին Մեծ-Եպարքոս ձեվատ փաշա Գանտիայի զինուորական հրամանատար անւանուեցաւ :

Վերջին սուրհանդակով առնուած եւրոպական թերթերը Կ. Պոլսէն հետեւեալ հեռագիրները կը հրատարակեն՝ զանազան ազդիւրներէ :

— Ընդհանուր կարծիքն այն է այստեղ, թէ թուրքիա չի պիտի համակերպի Տէրութեանց կամքին, բաւական է որ ճնշողական միջոցներ ի գործ չի դրուին :

— Մեծ-Եպարքոսն հրաման զրկեց որ տուրքերու գանձումը փութացնեն ի թեալիս, մասնատրապէս ոչխարի տուրքը : Էտհէմ փաշա իր բանակետղը Լարիսայէն Տոմբոս փոխադրեց :

— Սուլթանը կը հակառակի Կրէտէի կուսակալութեան պաշտօնին համար պէճիացի թէյի հազարապետին ընտրելութեան, որ առաջարկուեցաւ Նումա Տրօզի ընտրելութեան մերժութիւնն ետք : Կը հաւատեն թէ աւելի համամիտ է Լուի Նաբօլէոն իշխանին ընտրելութեան, որ ռուսական բանակին մէջ զընդապետ է, և այս օրերս Չարին ներկայացրել է :

— Կերեսայ թէ Պ. Նէլիտֆէն ետք՝ կարգը Պ. Գանպօնի պիտի դայ Վոսիփի ափերէն վերջնապէս հեռանալու փրանսական դեսպանը որ արձակուրդով Բարիդ կ'երթայ Պ.

Հանօթօյի հետ խորհրդակցելու, ընտրելի է եղեր Լոնտոնի դեսպանութեան պաշտօնին : Այդ պարագային մէջ, իրեն պիտի յաջորդէ ի Կ. Պոլիս կամ Մատրիտի դեսպան Պ. Բէվէրսո և կամ Պրիւսէի դեսպան Մոնթօրն կոմսը :

— Սրաւստի տեղեկութեանց նայելով, Սուլթանը՝ օտմ բարձրատիճան պաշտօնատարի մը հետ խօսակցութեան միջոցին՝ յոյս յայտնել է թէ Տէրութիւնը չի պիտի կրնան համաձայնիլ զինքը հարկադրելու որ թեալիս լիան թողու : «Որոշած եմ, յարեր է, քանի մը օր ալ սպասել. եթէ զիջում չընեն ինձի, հրաման պիտի տամ բանակիս որ առաջըսէ և հաշտութեան պայմանները պիտի կնքեմ նոյն իսկ Աթէնքի մէջ» :

Պատերազմական պատրաստութիւնները կը շարունակուին միշտ, բայց համախմբուող զօրքերուն թիւը չափազանցուած կ'երեւի : Այս տարուան պահանջն սպասուած թուով զօրք չեկաւ : Անտուրուի մէջ զինուորագրութեան տարիքը 14ի իջուցուեցաւ :

Թեալիս երթալու պատրաստուող 6-7000 զօրք՝ Նիկոմիդիոյ մօտերը կը սպասեն, երկաթուղոյ կամուրջի մը փլուզելու պատճառաւ :

— Վիէնայի կէս-պաշտօնական Թրէւիսէն-պրաք լրագիրը իր յուլիս 8ի թիւին մէջ կը քննադատէ Դրան ձգձգումները՝ հաշտութեան կնքման համար և կըսէ թէ թուրք կառավարութիւնը վերջ ի վերջոյ պիտի հարկադրուի հաւտալու Տէրութեանց համաձայնութեան : «Ռուսիա» և Գերմանիա, կը յարէ աւստրիան թերթը, միւս մեծ Տէրութեանց պէս համոզուած են թէ հարկ անհրաժեշտ է բանակցութիւնները շուտով ելքի մը յանգեցունել : Պէտք է որ Եւրոպայի զօրաւոր կամրին բաղխին Դրան փորձերը որով կուզէ անհամեմատօգուտ մը քաղել իր յաղթութիւններէն :

Այս առաւօտ Կ. Պոլսէ հաւասի հեռագիր մը կը հաղորդէ թէ դեսպանները պիտի գումարուին այսօր : Թէվֆիդ փաշա ծանուցեր է աւստրիական դեսպան Պ. տը Բալիէի թէ Դուռը սկզբունքով կընդունի՝ եւրոպական զինուորական յանձնաժողովին կողմէ առաջարկուած սահմանադրի փոփոխումը, այսինքն նախկին սահմանադիրը. իսկ պատերազմական տուգանքի գումարը՝ չորս միլիոն ոսկի :

ԻՐԱԽԱՅԻ ԲՈՂՈՔ ՄԸ

Դաւառեան վարժարանի աշակերտներէն մին աղայական անմեղունակ toupetով մը մեղ զրկած է հետեւեալ նամակը զոր նոյնութեամբ կը հրատարակենք՝ իր հրապոյրէն բան մը չի պակսեցնելու համար :

Սիրելի միսիւ փարոս

Ներողութիւն կը խնդրեմ որ ձեզի փոքրիկ ձանձրութիւն մը տամ : Դուք որ լրագիր կը հանէք, անշուշտ մեր փափաքն ալ պիտի կատարէք :

Հարկաւ ամեն օր կը տեսնար որ գաղղիացիներու տղարը երբ դպրոց կ'երթան, ամեն տարի ամառը երբեք ամիս վտարան կ'ընեն, քննութիւն ընելէն վերջը :

Կիրակի օր մ'ալ պարգեւատրուեցի ինձ կընեն : Նոր լոթերին կը հագնին, աղւոր շապիկ, բաւալթ, նոր կոշիկներ և մայրիկնուն ու հայրիկնուն հետ դպրոց կ'երթան : Շատ բազմութիւն կուգայ, պղտիկ մանչեր, պղտիկ աղջիկներ բոլորն ալ

հոն են. մուգիքա կը չափեն, թէաթիւ կը խաղան, ճառ կը զուրցեն, տարբեր կուտեն, կը երգեն, քօնաօթը և մենծ մարդեր տնոյ աղւոր ետպարզը գիրքեր կուտան. թարնի կը զնեն զլուսին, մայրիկին անոնց երեսն կը համարուի. հայրիկը ֆրանս մը ընծայ կուտայ, և թէսթիւ գիրքեր թեւերնուն տակ՝ տուն կ'երթան ուրախ և զուարթ :

Մենք, անասուններու պէս այս չորս տխուր պատերաւն մէջ բոլոր տարին կ'աշխատինք. օր մ'ալ կըսեն քի, հայտն գոցէք, վարանցաւ, երկու ամիսէն եկէք : Նէ հանգէս ունինք, նէ գիրք, նէ մուգիքա :

Ինչ, մենք ֆրէնիկ չօժուներուն չափ արժանիք չունինք, մենք մարդու գաւազ չենք քի մեզի ատանկ կը նային :

Կաղաչեմ, միսիւ փարոս, մեզի համար բան մը գրեցէք, բոլոր քի մենք ալ մեզը ենք ինչ կըլայ, պղտիկ հանգէս մը թող ընեն, մեզի գիրք տան. մուգիքա չափենք, խաղ կ'անջենք : «Ձեր դպրոցը տարին ութ հարիւր լիւրս ունի» կըսէ հայրիկս : Ինչ կըլայ այդ ստակէն 20 ոսկի ալ մեզի համար թող ծախք ընեն, քի մենք ալ մեր փարձապետները սիրենք, էֆէնտիներուն համար աղօթք ընենք, աշխատինք մարդ ըլլանք :

Աղէկ բան մը կայ նէ, ան ալ տա է քի մեզի քննութիւն չըլին այս տարի : Ուրիշ դպրոցները աւստրիական ունին աշակերտները քննելու, մեր դպրոցը վարժապետները քննութիւն կուտան :

Այս նամակը ինքնին այնքան պերճախօս է որ անոր վրայ բան մը աւելցնել աւելորդ կը համարինք և կը բաւականանանք զայն յանձնարարելով որու որ անկ է :

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Կը լսենք թէ Կարնոյ Առաջնորդ Գեր. Ղեւոնդ Արքեպիսկոպոս Նիշմանեան, որ երեսուցեամբ վանքն արտօրուած կը մնայ, զրաւութեամբ բողոքէ է առ Ամեն Օրմանեան Պատրիարքն՝ Ազգ. Կեդր. Վարչութեան այն որոշման դէմ որով առաջնորդական ընտրութեան հրահանգ տրուած էր Կարնոյ գաւառական Ժողովին և ընտրելաց ցանկ զրկուած :

Տ. Ղեւոնդ Արքեպիսկոպոս հակառահմանաբար կան կը դտնէ այս անօրինութիւնը, քանի որ յիշեալ վիճակին առաջնորդը ո՛չ հրաժարած է և ո՛չ հրաժարեցուցուած :

Երեսնէն կը գրեն Մշակին «Թիւրքա-հայ դադիականների հասանքը դեռ եւս չաւանակվում է : Այս օրերս մի նոր խումբ եւ կաւ, 92 հոգուց բաղկացած, խոյճայի վիճակի մէջ : Յունիսի 13ին, Ս. Պետրոս և Պօլոս եկեղեցում հոգեհանգիստ կատարվեց Վանի անցեալ տարվայ կոտորածի զոհերի համար» :

ՏՆՂԱՄԱՆ ԼՈՒՐՆԵՐ

Էլ-Թօր և Ապու-Զոլֆին մօզրանայններէն առնուած լուրերը հետզհետէ աւելի դժհաս ցուցիչ են. Ժամատախտի ո՛ր և է դէպք չի պատահիր քարանձինս սպասող ուխտաւորներուն մէջ : Ընդհանուր եփալուտի առաջապահական վիճակն այնքան լուս է արդէն, որ Ռօժէրս փաշայէն սկսելով՝ քարանձինայի վարչութեան դիմաւոր պաշտօնատարներին արձակուրդով մեկնած են այս միջոցիս, ինչ որ նորը բամբօրէն ըսել կուտայ մեր պաշտօնակիցներէ մէկուն թէ «այդ լծիչներուն բացակայութիւնն աւելի ապահովիչ է հանրութեան համար քան անոնց ներկայութիւնը» : Զիտաւէ-

էն ալ ժամտախտի նոր դէպք չի ծանուցուիր և Պոնպէի մէջ զգալապէս նուազած է համա- ճարակը : Գալտի Կ. Պոնպէ մէջ ժամտախտ ծագած ըլլալու զոյցին , զոր վերապահու- թեամբ հրատարակած էինք , պարզապէս Պոր- սայի խաղ մըն է եղեր օտմ. արժէթուղթերու անկում մը առաջ բերելու համար , և հիմակ բացարձակապէս կը հերքուի :

—Անտիգրայ , Ալեքսանդրիոյ և Երուսա- ղէմի յոյն-կաթողիկոսներու պատրիարք Տ. Դրի- ղարիոս Եօսէֆ մեռաւ Դամասկոսի մէջ : Հան- գուցեալը 74 տարեկան էր :

—Յուլիս 14ի ֆրանսական ազգային տա- րեգարձը ամենեցաւ չորեքշաբթի օրը Ալեք- սանդրիոյ ու Գահիրէի ֆրանսական գաղթա- կանութեանց կողմէ , ամեն տարուան նման հանգէտներով ու սպեւորութեամբ : Երկու քա- ղաքներուն հիւպատոսներն ալ ընդունեցին պաշտօնական անձանց և գաղթականութեան երեւելեաց այցելութիւնները : Գիշերը Երուս- վառութիւն և հրախաղութիւնք էզպէքիէի պարտէզին մէջ ի Գահիրէ և Սան-Սթեֆաննօ քաղինօն ու ծովափը ի Ռամլէ :

—Էմիլիոն Կապէր կը հերքէ Սրանսարսի Կ. Պոնպէ լծգնակցին այն լուրը , իբր թէ օտմ. արատաւոր պատուիրակ Միւնիք փաշա՝ որ ներկայ գտնուեցաւ Թագուհոյն յորէլեանի հանդէտներուն , տեսակցութիւն մը ունեցեր է Լորտ Սարգսլարիի հետ՝ անգլիացւոյ Նգիպ- տոսէ ելլելու խնդրի մասին և թէ այս առթիւ Բարձր. Խտիվը Կ. Պոնպէ պիտի հրաւիրուի :

Ա Ջ Դ

Ռումանիոյ Ֆոքսան Կալաֆի Հայոց Ազգ. Երկեսն վարժարանաց համար կուգուի Բաշահմուտ և պիտի անուցիչ մը եւ անուցչուհի մը , որք երէ գիտնան նաեւ գաղղիներէն՝ նախ աղաւ կը կամարուին . առաջ- նոյն տարին ըլլալ 30—35 եւ երկրորդին 25—30 : Փափագողք դիտեն հանդերձ կարելու ծանօթութեամբ ի մասին իրենց անցեալ գործունէութեան առ

F. S. Ferhatian à Focsani en Roumanie

ՕԳՏԱԿԱՐ ԸՆԾԱՅ

ՖԵՐԽԱՏԱՆ ԲԱՐԵԲԵՆԷ

—Ըսել է , սիրելիս , չես ուզեր որ իմ ճաշա- կիս համեմատ ընծայ մը տամ քեզի , անուանող տա- րեգարձին առթիւ :

—Ո՛չ , բա ճաշակը իմինչ ատեն տարբեր է :
—Անանկ է նէ տղիք ընծայ դու որդէ :
—Անուան տարեգարձին համար , ո՛հ , երբք չալտի համարձակիմ :
—Սակայն , վերջապէս , պէտք է գիտնամ թէ ի՞նչ բան կրնայ քեզի հաճոյք պատճառել :
—Գալիք , տեսնեմ :
—Ինծի քիչ մը օգնեմ նէ , թերեւս . . . :
—Չեմ կրնար , անկարելի է :
—Այդքան տարօրինակ բան է որքան ուզածդ :
—Այո և ոչ : Թէեւ այնքան անսովոր բան մ'ալ չէ , միայն Գոյմարտի հաւկիթին պէս , մարդուս մորէն անցնելու է :

—Անշուշտ ուզածդ սուղ բան մըն է :
—Աշխարհիս վրայ ձրի բան չկայ , չե՞ս գիտեր :
—Եթէ խնդիրը ստակի վրայ է , մի քաշուր , դրուցէ՛ , գիտես թէ քեզի հաճելի ըլլալու համար դրամական ամեն զոհողութիւն ընելու միշտ պրա- մադիր գտնուած եմ :

—Գիտեմ , ընկերք ծախք չէ որ զիս պիտի կատենէ երջանկութեան համար պէտք եղածը խնդրելու քեզի պէս բարի էրիկէ մը :

—Բայց վերջապէս զոչալ մը ըլլալու յաւանտ- տութիւնը չունիմ՝ որ ինձ կարելի ըլլայ խորհրդա- տար բաղձանքը իրագործել :

—Ընդհակառակը ես կը կարծեմ թէ քիչ մը

տրամաբանորէն մտածելու եթէ , ըլլաւ , անպատճառ կրնաս գտնել թէ կարգուած կնիքան մը էն սիրելի երազը ո՞րք կրնայ ըլլալ :

—Կարծեմ թէ իր ամուսինէն սիրուիլն է :

—Ո՛հ , Աստուած իմ , այդ չէ :

—Գեղեցիկ արդարադրեք ունենալ , շատ մը գոհարեղեններ . . . :

—Միթէ չունիմ :

—Կարելի է ատոնցմէ աւելին կուգես :

—Ատոնցմէ աւելին ի՞նչ պիտի ընեմ :

—Այդեք սենեակիկ կարտաին վերանորոգել կուգես և կամ թէ մեծ ճամբորդութիւն մը բնել կը փափագիս :

—Ատոնցմէ և ոչ մէկն է , ոչ :

—Նիսի , Քանի կամ Ան-Ռաֆայէլի մէջ աղւոր տուն մը կուգես արդեօք :

—Ինծի՞ համար , Աստուած չընէ , միտքդ ան- գամ մի՛ անշուքեր :

—Իրաւ որ , Սերնքներու դադանկը թափան- ցել իմ դործս չէ : Եթէ անուանող տարեգարձին հա- մար , քեզի ամենէն շատ հաճելի եղած ընծայ մը կա- ղես , բայց ի բաց ըսէ :

—Բայց խօսք կուտաս որ խեղդի պէս փափա լած բանս պիտի կատարես :

—Կերպեմ : Ուրեմն , զարկէ՛ նայիր , իմ աղ- տորիկ կնիքս , ինչ կուգես որ քեզի ընծայ ընեմ :

—Շնորհով ամուսնութեան ընկերութիւն մը :

ՄԱՐԿՈՍ ՊԱՆՇԵՐՈՆ

ՇԱՀԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿ. ՀԱՅՈՑ Ի ԳԱՀԻՐԷ

Նախորդ կիրակիէ օր ընկերութեանս ընդհ. ժողովոյ նիստն տեղի չունեցաւ անդա- մաց մեծամասնութեան բացակայութեան պատա- ճառաւ :

Կը խնդրենք մեր Պատ. ընկերներէն որ բարեհաճին այս անգամ ներկայ լինիլ ընդհ. ժողովոյ նիստին որ տեղի պիտի ունենայ յա- ռաշիկայ կիրակիէ , 18 յուլիս , առաւօտեան ժամ 10ին , Բարեգործական ընկերութեան խորհրդարանին մէջ :

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Համարատուութիւն Գործ. Ժողովոյ :
2. Ընթերցումն նորոս միամեայ տեղեկագրոյն :
3. Այլեւայլ տաղարկներ նայելն ընկերութեանս օգտին ու յաւելիութեան նկատմամբ :
4. Ընտրութիւնք ընդհ. ժողովոյ Գլխին ու Գործ. Ժողովոյ :

Ներկայից թիւն ինչ որ ալ լինի , նիստն օրի- նաւոր է և տրուած որոշումք վաւերական :

Ի դիմաց Շահա. ընկերութեան

Ընդհ. ժողովոյ

Ասեմագլխի

Ասեմագլխի

Գ. ՇԱՀԱՍԻՐԱՆԻ

Մ. ՊԱՆՇԵՐՈՆ

ԱՌՏՆԻՆ ԲԺՇԿՈՒԹԻՒՆ

Աւարանոյ երկու տեղէն իբր համաձայնութիւն ընկերութեանս սկսած է բանալ հարուստ և կեն- ցազաւոր խաւերու մէջ : Բարեխառն գոտոյ մը գար- նան հրապոյններն գտնուան հայրներու և ձեւերու տակ լինչ երազներով սկսած չէ սրբել զանոնք . մին կերեւակայէ ծովի սիւքն , բարիք մը ան . ստաց մեղքի ստատիկան , մին լեւերու բառին իր ճիշտ- պատկ կատարով և ծաղիկաց փունջերով ու թու- փերով ուրիշ մը գաշտաց զեփիւնն ուր արծաթա- փայլ գետեր և լճակներ իրենց կողքին և եզերքին ծաղկաթիթիթ կամ միգայից պարտէզներով չըջապա- տած են և ուր ստիպին իր զայլալիկով թաւառի մը անարին և կարկաճող առուակն իրենց եղերեղան կամ օրհներգը կուտան անուշահոտութեամբ յաղե- ցած միջնորդութիւն : Գահիրէի տակայ միջնորդութիւն այս քաղաք երեւակայութիւններով վայրիկ մը կը թողան փայտաններու երկինք և կը հետնան . թողունք որ երթան նոյս և մենք գտնուած մեր միջնորդութիւն ուր տղաքան , մասնաւոր երկրապաշտ , անարժանք արհես- տարներ (1) և զրաղէտն , ֆելլաշին հետ միասին կը տանին կիզիչ արեգին հրատապ ճառագայթներն , անասով ճանձին և անգուր մեղքին թռնուոր և

սուր խայթումներն , չոր անապատին հեղձուցիչ փոշին և տոչորիչ բամբակ , ժամտախտի երկիւղն եւ փողոցներու ժամտախտ գոյրըն , վերջապէս ինչ որ գահիրէական է՝ նոքա անէծքի և տրտման խառն թուրք նետերով կը տանին՝ այս ալ կանցնի բոլորով :

Գահիրէ մնալու ստիպումը իմինչեւ եւս այն դառնութեան բաժակի բաժակակից և զրաղից , Փարոսի ընթերցողաց գէթ օգտակար ըլլալու փա- վաբով կը թելադրէ մի քանի ատոյղապահական , լաւ եւս նախնական միջոցներ զորս կարելի է ի գործ ածելու այս դժոխաց եղանակին , մի քիչ հանգիստ , ստող և գոհ կարենալ ապրելու համար :

Արդէն առածի կարգ անցած է թէ , շատ հի-ւանդութիւնք սրտէն առաջ կուգան , սակայն ձմեռ կամ ցարտ եղանակին մարդիկ սրալ չեն առնու- զի բնութիւնն այդ մասին զգոյշ է . միանուր կը ձգտին և մարթին ծակաթիւնքը կը կծկին այդ ժամանակ : Բայց ամբան տոնէ ջիւղերը տկարացած , մասնք և միանուր թուրացած , մարթն կակրացած , տանց վրայ բարդէ՛ քրտինքն , հոգստուն մի տեղ հանգստա- նալն և զոխարար բնական խաւերու ստատիկ տեղէն կը զիւրացնեն մարմնոյ տեղի տալուն և եթէ , ինչ- պէս սովորաբար սուր միջնորդութիւն յաղեցած ըլլայ թռնուոր միջնորդութիւն , յայնմամ՝ նա պատրաստ որս մը կը գտնուի շատ մը հիւանդութեանց :

Ուստի այս ծախող եղանակն որ կրկնակի կեր- պով վաճառար կը գտնուի տանց խնայելու մեծին կամ փոքրին , մեզմէ ալ կը պահանջուի կրկնակի պաշտպանութիւն մեր անձի նկատմամբ , թերեւս ի դէպ է թուել այն հիւանդութիւններէ մի քանին որք այս ամաց մէջ մի պատահաւ կը դառնան մեր շուքը . ասոնք են՝ ջերմ , հարբուխ , որովայնալուծութիւն , թանջք , արեւազարկ , ստամոք- սի նեղութիւնք , մարթի զանազան հիւանդութիւնք , միքրոպային համաճարակք . թէեւ մեզմէ շատեր տա- ըրքի կազմութեան և տեղի , բնականութեան և ուրիշ պատճառներով խուսափել չեն կարող , սակայն և այնպէս եթէ մեր թելադրելիք միջոցներ գործադ- րուին՝ երկնայութիւնք խիստ կը նուաղի :

Մարգո ինքն է իր անձի բժիշկը և այս տղերք միայն անոնց օգտակար կըլլան որ իրենց անձին արժանիքը կը գնահատեն : Շատ հեշտ է ժողովուր- դի մը բժշկին և քահանային հետ հաշտ տարիչ հեռու տղերքը . քահանան իր Աշխատէ ամենայնը և բուրվառն , իսկ բժիշկը իր գեղադիրն ու դե- ղահատներն բիշ անգամ ի վնաս ժողովուրդին ի գործ պիտի տան : Թաղով քահանաներն իրենց խու- ցերուն մէջ , բժշկի քաղերէ խաւատիկաւ ամենէն զիւրին միջոցն անոր քաղերուն և խօսքերուն հե- տեւին է :

Գահիրէի այս մի քանի ամիսները թէեւ խիստ տաք , բայց չեն անտանելի և կարելի է տոկալ հե- տապայ պարզ միջոցներով :

Բնակութիւն. — Սա՛ղբառի նկատմամբ գէթ խիստ մի ծանր հարց է . տաններն պէտք է զէպ հիւսիս և արեւելք պատահաններ ունենան , ստա- ջին և երկրորդ յարկեր (եթէ երկրորդ յարկ ունի) , բնակութիւն հաստատել արեւ չը տեսնող սենեակ- ներէ զգոյշ ըլլալ , որչափ կարելի է բիշ կահ կա- ռաթի պահել սենեակոյ մէջ , զիւրի տոնէ բուռեղներ և կենդանիք հետացնել ննջատենեակներէ , ճեմիչն միշտ ջուրով սղոյնել և չարաթիւ մի քանի անգամ ասիտիֆիկի կամ կիր կամ ուրիշ տաղանթխական ստաղկանք գործածել , զիւրայն պատահանի վե- րի մասը բաց կարելի է պահել եթէ դուռը փակ- ուած է , ստաւառեան կանախ լոյսը պատահանները բանալ որ մարտը օդ բանի ներս :

Ձգես. — Տարւոյն այս եղանակին ըստ կարել-ւայն թեթեւ հաղնելու է . օդի տարաթիւնը մեր մարմնոյ տաքութենէ բարձր կամ հաւասար ըլլալով միջնորդան ալ չորս պէտք է խիտ գործուած սա- կայն բարակ զգեստներ հագնինք , ինչպէս են պարզ կտաւ , կանեփէ կերպար և մետաքս . բոլորեղենն այնքան խոնավ եւ տաք կլիմաներու տեղի կը յար- մարի ինչպէս Ալեքսանդրիա եւն . ստակի հա- ղարեան սովորութիւն մը տակաւին մեր ժողովուրդին մանուսնող դաւաճանքի դատակարարին մէջ արմատա-

(1) Մ. Խ. Յոգուսագլխի Տօքթոր փոխանակ անարժանք բժիշկ ըսելու , ինչ որ ընդունուած բա- ցատրութիւնն է , անարժանք արհեստաւոր ըսած է . բնակավայրաւ իր արհեստակիցներ չի միտադրելու համար :

ցած կը մնայ. այն է զիշերը պառկել միեւնոյն ճերմակեղէնով զոր ամբողջ օրն արդէն կրած էր իր վրայ. սա խիստ մնասկար սովորութիւն մ'է, զի շերի զգեստն և ցորեկինը պէտք է միշտ անջատ ըլլան:

Կերակուր.—Այժմ շատ զգոյշ ըլլալու ենք Կերակուրներու թէ քանակի և թէ որակի մասին: Մը սեղէնք որչափ կարելի է նուազելու են մեր սեղանէն. բայց արգանակ, կաթ, ժածուն, հաւկիթ (համ կամ կեսեփ), պանիր, խաղող միշտ, ձմերուկ սեխ և ուրիշ լաւ հասած պտուղներ, նաեւ բանջարեղէնք և ընդեղէնք. ստամոքսի տկարութիւն ունեցողք բանջարեղէններէ զգոյշ ըլլալու են և աւելի կաթ ու հաւկիթ ուտելու են, նաեւ չաքարեղէններէ և օղակի դասակարգէն պատրաստուած կերակուրներէ, ինչպէս րրինձ, գետնախնձոր (բաթաթէն) և ինչ. բանջարեղէնք լաւ եփուած ըլլալու են, իսկ կանաչ ուտելէ առաջ ապի ջուրէ անցունելու է: Կերակուրի ժամանակ պաղ ջուր հեշտութեամբ կարելի է գործածել. բայց քիչ քանակութեամբ. կերակուրէն մէկ քառորդ ժամ վերջ պաղապղտին օգտակար կ'ընայ ըլլալ մարսողութեան:

Ընկերիք.—Պարզ թորեալ ջուրը սպողեցունելէ վերջ մեր սովորական ըմպելին ըլլալու է. սա կայն լիմոնաժը, թամարինոն, նուրի և լալի օ. չարակէ ըմպելիք, նաեւ համաքային ջուրեր և կաղողը միշտ կարելի է գործածել չափաւոր կերակուրի Ոգեղիք ըմպելիներն որ և է ձեռի տակ միմիայն բըժըշկի հրահանգով գործածելու է, զի իր անմիջապէս փնտռէն աւելի, մարդիկ իրեն ենթակայ ընելու ստակար յատկութիւնն ունի:

Մամուլ մաքուրիւն.—Այս եղանակին, թէ տաքութեան և թէ զանազան հիւանդութեանց դէմ մաքուրութեան ամենէն մեծ դէպքն է՝ մարմիննիս մաքուր պահել. ուստի այս մասին որչափ եւս ծանոթանա՞մք ընթերցողի մօրի վրայ, քիչ է. ամեն առաւօտ և եթէ ձանձրութիւն չէ նաեւ կէսօր և երեկոյ մարմիննիս լուծու ենք. բազմիք երթալու պէտք չկայ ոչ ալ տունի մէջ տաշտի պէտք. եթէ աղքատ է, բաւական է որ ջուր ըլլայ. մաքուր լաթի կտոր մը թրջէ ջուրին մէջ և մարմինդ մաս առ մաս լուծաւ ուրիշ չոր լաթի կտորով այ չորցնելու սրայմանաւ, օժան ևս գործածուելու է մի քանի օրը անգամ՝ մը, տկար կազմ ունեցողք տար ջուր, իսկ զօրաւոր կազմ ունեցողք սպաղ ջուր գործածուելու են, մեր ձեռքեր թլկել ցողք սպաղ ջուր գործածուելու են, մեր ձեռքեր թլկել մեր ամեն օգտակար մասերէ մին, մեզ շատ մը հիւանդութեանց, եթէ չըսեմ մահուան, կրնան առաջնորդել, եթէ զայնս միշտ մաքուր չը պահենք զի նա ամեն կարգէ առարկայի հետ չօգտւածն մտնելով նորա վրայ ժողոված թոյն կամ միքրոպն կառնու և մեր աչաց, քթին և բերանին յանգէտ կը հաղորդենք. ուստի միշտ օժանով լուծու է հացէ վերջ, առաջ և ուրիշ ատեններ: Որի է մի ջնջին բայց անսովոր նշան երբ կը նկատէք ձեր մարմնայ վրայ, բժշկի մէկ այցելութիւնը ձեզ շատ մը փորձանքներէ և տուգանքներէ կրնայ փրկել. այսպիսի փոքր թերթի մը մը մէջ անկարելի էր մեզ ամեն ինչ մանրամասն գրել. ուստի սպարգեցիմք ինչ որ օգտակար կրնայինք նկատել:

ՏՕՔԹ. 1.0ՆԿ

ՏՕՔԹՈՐ 1.0ՆԿ

ՏՐ. 1.0ՆԿ, մասնագէտ կանանց, սաւոնսի, մորթի եւ ջրային հիւանդութեանց: Կ'ընդունի իրեն դիմող հիւանդները Մեզոն Զահար, Շեքիւրս Զօրէի հիւր դիմք. ամեն օր առաւօտեան ժամը 10էն 12 եւ կես օրէն վերջ 3էն 5: Բոլոր վկայեալ աղբախձի կը դարմանուին:

ԲԻԻԶԱՆԻ ՓԱՓԱԶԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

Պատու ունին ծանուցանել արգոյ հասարակութեան թէ Պաղար Մուրուրի մէջ խանութ մը բացած են ուր ընտիր տեսակէ և ծեծուած խահլէ պիտի ծախուի սովորական գներով:

Այս խանութին մէջ կան նաեւ զովացուցիչ ըմպելիներ:

Le Gérant: HENRY SAKAKINI
Տպագրութիւն ՓԱՐՈՍ լրագրի

ԴՐԱՄԱՏՈՒՆ
ԱԼԷԲԱՆՏՐ Ժ. ԲԵՍՄԱԶՈՂԼՈՒ

Գ Ա Ն Ի Ր Է

Գնում և վաճառում արժեթուղթերու.— Կանխաձեռն արժեթուղթերու վրայ.— Կտան. ձեռք յաճախողներու հաշիւին համար դանձումներ ընել Եզիպտոսի և արտասահմանի գլխաւոր քաղաքներու մէջ.— Պայմանաժամաւոր վաճառում ամեն տեսակ պարզ եւ աւոր արժեթուղթերու, օրինաւոր պայմաններով:

Աւելի մանրամասն տեղեկութեանց համար դիմել Պոլսոյ փողոց Եզիպտոսի հետազոտման դէմ Բէսմազօղլու դրամատունը:

ՀՐԱՆՏ ԱԶԱՏԵԱՆ
ԱՐԴԿՈՂ ԵՒ ԼՈՒՍՏԱՐԱՐ

Էօզպէքիյէ, Պիւլիւլեանի օթելին քովընտրի կամարակապ փողոցը բացած խանութին մէջ ամենէն դժուարահաճները գօհայնելու եղանակաւ կ'արդուէ չապիլներ և այլն սովորական գիններով:

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ԵՐԹԵԿՈՒԹԵԱՆՑ

Սկսեալ 1 Փետրուար 1897

ԳԱՀԻՐԷԻ ԱՂԵՔԱՆԳՐԻՈՅ ԳԻԹ

Գ Ա Յ Ա Ր Ա Ն Ք	Խառն 1,2,3,4,5	Օմնիպ. 1,2,3,4,5	Կէս ուղ. 1,2,3,4,5	Օմնիպ. 1,2,3,4,5	Էրրէլ. 1, 2 կգ.	Օմնիպ. 1,2,3,4,5	Էրրէլ. 1, 2 կգ.	Օմնիպ. 1 2 3 կարգ	Էրրէլ. 1 2 3 կարգ
Գահիրէ	մեկ. 4 45	—	7 —	8 15	9 30	3 30	4 45	7 15	11 —
Պէնհա	» 8 —	—	7 49	9 32	10 45	4 47	5 29	8 32	12 35
Թանթա	» 11 28	—	8 30	10 30	10 55	5 45	6 7	9 30	1 44
Թանթա	մեկ. 11 48	6 —	8 34	11 15	11 —	6 26	6 11	—	1 54
Տամանհար	» 3 10	7 34	9 41	12 49	11 58	7 59	7 7	—	3 51
Աղեքաանդրիս	» 6 25	9 15	10 45	2 30	1 —	9 40	8 7	—	5 50

ԱՂԵՔԱՆԳՐԻՈՅԻ ԳԱՀԻՐԷԻ ԳԻԹ

Գ Ա Յ Ա Ր Ա Ն Ք	Օմնիպ. 1,2,3,4,5	Կէս ուղ. 1,2,3,4,5	Օմնիպ. 1,2,3,4,5	Էրրէլ. 1 2 կգ.	Խառն 1,2,3,4,5	Օմնիպ. 1,2,3,4,5	Էրրէլ. 1 2 կգ.	Օմնիպ. 1 2 3 կարգ	Էրրէլ. 1 2 3 կարգ
Աղեքաանդրիս	մեկ. —	7 —	7 15	9 —	9 20	2 30	4 15	6 15	11 —
Տամանհար	» —	8 6	8 58	10 2	12 14	4 13	5 15	8 6	1 9
Թանթա	» —	9 12	10 28	11 —	2 39	5 43	6 10	9 40	2 56
Թանթա	մեկ. 6 15	9 16	11 20	11 5	2 49	6 30	6 14	—	3 6
Պէնհա	մեկ. 7 18	9 59	12 23	11 46	4 43	7 33	6 52	—	4 25
Գահիրէ	» 8 30	10 45	1 35	12 30	6 25	8 45	7 35	—	5 50

ԳԱՀԻՐԷ-ՍԻԻԷԶ

ՊԵՆՀԱՅԻ ԶԱՄԲԱՅ

ՍԻԻԷԶ-ԳԱՀԻՐԷ

ԿԱՅԱՐԱՆՔ	ԱՅԱՐԱՆ	ԵՐԵԿԱՅ	ԿԱՅԱՐԱՆՔ	ԱՅԱՐԱՆ	ԵՐԵԿԱՅ
Գահիրէ	մեկ. 11 40	7 —	Սիւլզ (քարափ)	մեկ. 9 50	—
Պէնհա	» 12 28	7 48	» Կայարան	» —	3 30
Թանթա	մեկ. 12 33	7 53	Իստանբուլ	» 1 20	7 5
Զակադիկ	» 1 34	8 54	Զակադիկ	» 3 7	8 53
Զակադիկ	մեկ. 1 44	9 4	» Զակադիկ	» 3 17	9 3
Իստանբուլ	մեկ. 3 40	1 —	Պէնհա	» 4 3	9 47
Սիւլզ Կայարան	» —	5 —	» Զակադիկ	» 4 17	9 4
Տօք (քարափ)	» 6 55	—	Գահիրէ	» 5 5	10 35